



ԳԱՆՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕՇԵՍ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱԴԱ

ԿԱՆՏԵԴՂ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏՆԵՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 13 Սեպտեմբեր 2020

180

DIMANCHE, 13 Septembre 2020



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ԽԱՉՎԵՐԱՑ

Տօն Վերացման Սրբոյ Խաչին

EXALTATION DE LA SAINTE CROIX

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(6.14-18)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

(3.13-21)

Les lectures de la Bible d'aujourd'hui

GALATES 6.14-18

JEAN 3.13-21

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébration et l'Homélie

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ- ուղիղ սփռում - 10:30-ին

La Sainte Messe – En direct à 10h30

Ռեհանի Օրհնութիւն եւ Մատաղօրհնութիւն -

ուղիղ սփռում 12:00-ին

Bénédictio du Basilic et Madagh - En direct à 12h00

DIACRES – ACOLYTES

Organiste: Mme Houry Bedrossian

Chœur "Gomidás"

ԿՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 6.14-18

14 Բայց ես ամենեւին պիտի չպարծենամ, այլ միայն մեր Տերոջ՝ Յիսուս Բրիստոսի խաչով. անով աշխարհը խաչուած է ինծի համար, ես ալ՝ աշխարհի: 15 Որովհետեւ Բրիստոս Յիսուսով ո՛չ թափատուութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ո՛չ անթափատուութիւնը, հապա՛ նոր արարած ըլլալը: 16 Խաղաղութիւն ու ողորմութիւն բոլոր անոնց վրայ՝ որ այս կանոնին համաձայն կ'ընթանան, եւ Աստուծոյ Իսրայելին վրայ: 17 Ասկէ ետք ո՛չ մէկը թող անհանգստացնէ զիս. որովհետեւ ես մարմինիս վրայ կը կրեմ Տեր Յիսուսի վերքին սպիւները: 18 Եղբայրներ, մեր Տերոջ՝ Յիսուս Բրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ: Ամէն:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 3.13-21

13 Ո՛չ մէկը երկինք բարձրացաւ, բացի անկէ՛ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է: 14 Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը անապատին մէջ, այնպէս պետք է որ բարձրանայ մարդու Որդին. 15 որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:

16 Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը: 17 Զանի որ Աստուած աշխարհ յրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՛ որպէսզի աշխարհը փրկուի անով: 18 Ա՛ն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ան որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին: 19 Սա՛ է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց

գործերը չար էին: 20 Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուին իր գործերը: 21 Բայց ա՛ն որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծոմով»:

Galates 6.14-18

14 Mais pour moi, à Dieu ne plaise que je me glorifie sinon en la croix de notre Seigneur Jésus-Christ, par lequel le monde m'est crucifié, et moi au monde! 15 Car en Jésus-Christ ni la Circoncision, ni le prépuce n'ont aucune efficace, mais la nouvelle créature. 16 Et à l'égard de tous ceux qui marcheront selon cette règle, que la paix et la miséricorde soient sur eux, et sur l'Israël de Dieu. 17 Au reste, que personne ne me donne du chagrin; car je porte en mon corps les flétrissures du Seigneur Jésus. 18 Mes frères, que la grâce de notre Seigneur Jésus-Christ soit avec votre esprit; Amen!

Jean 3.13-21

13 Car personne n'est monté au ciel, sinon celui qui est descendu du ciel, [savoir] le Fils de l'homme qui est au ciel. 14 Or comme Moïse éleva le serpent au désert, ainsi il faut que le Fils de l'homme soit élevé; 15 Afin que quiconque croit en lui ne périsse point, mais qu'il ait la vie éternelle,

16 Car Dieu a tant aimé le monde, qu'il a donné son Fils unique, afin que quiconque croit en lui ne périsse point, mais qu'il ait la vie éternelle. 17 Car Dieu n'a point envoyé son Fils au monde pour condamner le monde, mais afin que le monde soit sauvé par lui. 18 Celui qui croit en lui ne sera point condamné; mais celui qui ne croit point est déjà condamné; parce qu'il n'a point crut au Nom du Fils unique de Dieu. 19 Or c'est ici le sujet de la condamnation,


que la lumière est venue au monde, et que les hommes ont mieux aimé les ténèbres que la lumière, parce que leurs œuvres étaient mauvaises. 20Car quiconque s'adonne à des choses mauvaises, hait la lumière, et ne vient point à la lumière, de peur que ses œuvres ne soient censurées. 21Mais celui qui s'adonne à la vérité, vient à la lumière, afin que ses œuvres soient manifestées, parce qu'elles sont faites selon Dieu.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

«Սակայն քա՛ւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Բրիստոսի խաչով, որով աշխարհը խաչուած է ինծի համար, ես ալ՝ աշխարհին համար» (Գաղ. 6:14):

Յարգելի՛ բարեպաշտ եղբայրներ եւ քոյրեր ի Բրիստոս, անսահման խնդութեամբ կը շնորհաւորեմ բոլորիս այս սքանչելի Հինգերորդ Տաղաւար Տօնին՝ խաչվերացին առիթով, որ կը տօնեն աշխարհի բոլոր Բրիստոնեայ եկեղեցիները: Կրկին անգամ սիրող Հայրը համախմբեց մեր մեծ Բրիստոնեական ընտանիքը իր տան սուրբ կամարներուն ներքեւ, որպէսզի եւս մէկ անգամ յիշատակենք մեր փրկութիւնը հանդիսացող Սուրբ խաչի



«ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍ»
Արծաթեայ խաչ, 18-րդ դար:

ամենակարող զօրութիւնը Տիրոջմով եւ մեր աղօթքները վերառաքենք առ
Հայր՝ ամէն պարագային ապակիներով անյաղթ Խաչի նշանին:

Լիայոյս եմ թէ բոլորիդ ալ յայտնի է այսօրուայ տօնին հիմքը հանդիսացող
պատմութիւնը, երբ եօթերորդ դարուն Տիրոջ Խաչափայտը գերեվար-
ուեցաւ Պարսիկներու կողմէ, տար-ուեցաւ Պարսկաստան եւ չնայած
անձեռնմխելի վիճակին՝ տասնչորս տարի մնաց գերութեան մէջ: Եւ երբ
վերջապէս 628թ-ին Հերակլ կայսրը ազատագրեց Քրիստոնէութեան
մեծագոյն մասունքը եւ վերադարձուց Երուսաղէմ, Խաչի փոխադրման
ճանապարհին անցաւ Նաեւ՝ Հայաստան Աշխարհով՝ Յիսուս Քրիստոսի
օրինութիւնը մէկ անգամ եւս սփռելով մեր հողին ու ժողովուրդին վրայ:

Երբ կը մտածէի այս տօնին ակունքներուն մասին եւ կը պատկերացնէի մեր
պապերուն ցնծութիւնն ու երանելի վիճակը, երբ մեծ երկիւղածուեամբ
կ'երկրպագէին Փրկչական նշանին, պատմութիւն մը յիշեցի, որ վերջերս
յսած էի: Պէյրութ կատարած այցելութենէն վերադարձած մեր
հայրենակիցներէն մէկը կը պատմեր, որ քաղաքի կեդրոնին մէջ գեղեցիկ
Նորակառոյց շէնքերու հարեւանութեամբ կանգնած են կիսաւեր ու այրած
շինութիւններ, որ բոլոր-ովին չեն համապատասխաներ ընդհանուր
տեսարանին եւ Նոյնիսկ՝ կը փճացնեն այդ: Երբ ան հարցուցած էր տեղացի-
ներուն, թէ ինչո՞ւ Նոր շէնքեր կը կառուցեն՝ վնասուածերը վերանորոգելու
փոխարէն, որպէսզի անոնք ալ բնակելի դառնան, անոնք պատասխանած
էին, որ այդ կառոյցները վնասուած են պատերազմի ժամանակ, անոնց մէջ
մարդիկ մահացած են եւ այժմ ոչ ոք չի ցանկար բնակիլ տան մը մէջ, ուր
մարդ մահացած է: Այսինքն մահուան գաղափարը այնքան խորթ է մարդուն
համար, որ Նոյնիսկ անոր կը վանէ այդ տեղէն:

Սակայն պիտի ըսեմ, որ մահուան վայր մը կայ, որ անտեսանելի ուժով դէպի
իրեն կը բերէ միլիոնաւոր սիրտեր եւ միլիոնաւոր Քրիստոնէայ ուխտաւորներ
ամէն տարի ծնկաչոք կը հասնին այդ վայրը եւ իրենց երկիւղած խոնարհումը
կը բերեն: Երեւի կռահեցիք, որ խօսքս Գողգոթայի բարձունքին մասին է, որ
այժմ կը գտնուի Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճարի տարածքին մէջ:
Ով որ արդէն եղած է հոն կը յիշէ, իսկ մնացեալին համար կ'ըսեմ, որ
զարմանահրաշ անկարագրելի մթնոլորտ մը կը տիրէ այդ սուրբ վայրին
մէջ: Բազմաթիւ ուխտաւորներ աշխարհի չորս ծայրերէն, տկար ու առողջ,
հարուստ ու աղքատ, ահել ու ջահել ծնկաչոք կը մօտենան այն քարին, որուն
վրայ կանգնեցուած է Տիրոջ մահուան գործիքը եւ աղօթալից շրթունքերով

երկրպագութեան համբոյր կը դրոշմեն տիեզերքի ամենէն սահմուկեցուցիչ մահուան վայրին: Մօտեցման ինչպիսի՛ ահռելի մեծ տարբերութիւն նշուած է երկու օրինակներուն մէջ, այնպէս չէ՞: Առաջին օրինակին մէջ մահուան վայրը կը վանէ մարդոց, իսկ երկրորդին մէջ՝ դէպի իրեն կը բերէ զանոնք դարերէ ի վեր:

Նոյնն է նաեւ՝ պարագան խաչի հարցին: Խաչին վրայ մեռաւ մարդացեալ Աստուած, բոլորին ամենայնի Արարիչը եւ այդ նոյն խաչը դարձաւ Քրիստոսի հետեւորդներուն պաշտամունքի առարկան, որուն առջեւ գլուխ կը խոնարհենք, եւ՛ կը համբուրենք եւ՛ մեծագոյն սիրով կը կրենք մեր պարանոցին: Սակայն մէկ այլ յարակարծիք կայ այստեղ, այն է, որ ոչ մէկ կերպ չենք ցանկար մեր խաչը վերցնել ու հետեւիլ Աստուծոյ՝ ինչպէս որ Ինքը պատուիրեց (Ղուկ. 9:23), այլ ամէն ինչ կ'ընենք անոնցմէ խոյս տալու համար: Այս խճճուած իրավիճակը պարզելու համար հարկ է, որ միասին քննենք, սիրելի՛ հաւատացեալներ, թէ ինչպէս կը հասկնանք խաչին իմաստը վերոյիշեալ պարագաներուն մէջ:

Առաջին դէպքին մէջ, ինչպէս արդէն նշեցի, երբ խօսքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչափայտին եւ անոր պատկերին մասին է, մենք մեծ սիրով եւ ակնածանքով անոր կը վերաբերինք: Ինչո՞ւ: Քանի որ ան կ'ընկալենք ոչ թէ որպէս մահուան գործիք, այլ համայն մարդկութեան եւ մեզմէ իւրաքանչիւրին անհատական փրկութեան միջոց: Որովհետեւ մինչեւ Տիրոջ խաչը բարձրանալը, մեղսագործութեան պատճառով մարդկութիւնը հեռացուած էր երկնային Յօրմէն, զրկուած՝ աստուածային սիրոյ կենարար լոյսի շնորհքէն եւ երկիրը այնպէս թաղուած էր մեղքի գարշահոտ ովկիանոսին մէջ, որ միակ փրկութիւնը եւ միակ փրկագինը Աստուծոյ մարդեղացումն էր, մեր մեղքերու դիմաց Իր սրբագոյն արիւնը հեղեղելը եւ մեռելներէն յարութիւն առնելը:

«Ան ներեց մեզի մեր բոլոր յանցանքները եւ ոչնչացուց հրամաններով հաստատուած այն պարտամուրհակը, որ մեր դէմ էր, վերացուց այդ մեջտեղէն եւ միւս խաչափայտին» (Կողոս. 2:14), կ'ըսէ Պօղոս առաքեալ: Եւ հագիւ թէ խաչի վրայ մարեց Աստուածորդիի վերջին շունչը՝ այդ պահուն ծնաւ մարդուն փրկութիւնը: Ծնաւ Արարիչին մեծագոյն սերէն: Խաչեալ Քրիստոսէն ճառագայթեց կենաց եւ սիրոյ այն հզօր լոյսը, որ սփռուեցաւ համայն աշխարհին վրայ: Քրիստոս Իր կեանքը տուաւ, որպէսզի մենք՝ մեղքի մէջ կորսուածներս, կեանք ունենանք: Այդ պահէն սկսեալ Քրիստոսի

խաչը դարձաւ դէպի Երկինք տանող միակ ճանապարհը, վերադարձի ճանապարհը: «Եւ ինչպէս որ Մովսէսը անապատին մէջ բարձրացուց օձը, այնպէս ալ մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի, ով որ անոր հաւատայ, յաւիտենական կեանքը ընդունի. քանի որ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի, ով որ անոր հաւատայ, չկորնչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» (Յովհ. 3:14-16):

Ահա՛, այս գիտակցումն է պատճառը, որ նման երկիւղ-աձուլթեամբ կը մօտենանք խաչին եւ այն իրաւամբ կը համարուի Քրիստոնէութեան մեծագոյն խորհրդանիշը: Սակայն այստեղ հարց մը կը ծագի. եթէ իսկապէս այդքան կ'արժէտորենք Աստուծոյ այդ անգին զոհաբերութիւնը, որ մեզի համար կատարեց, ապա ինչո՞ւ կ'անտեսենք Անոր այդ կարեւորագոյն խօսքերը, թէ. «Ով որ իր խաչը չի վերցնէր եւ ինծի չի հետեւիր, արժանի չէ ինծի» (Մտթ. 10:38):

Խօսքս բոլորովին ալ տրտնջալով ու զանգատելով մեր խաչը կրելու մասին չէ, սիրելիներ: Այլ Քրիստոնէական ուրախութեամբ, խիզախութեամբ, պատիւով կրելու եւ ամէն պարագային Աստուծոյ փառաբանելու մասին է: Կստահ եմ չէք առարկեր, եթէ ըսեմ, որ փորձութեան պահուն, բոլորս ալ աւելի յաճախ կը նմանինք յայտնի առակի այն մարդուն, որ Աստուծոյ մօտ կ'երթայ զանգատելու իր խաչին անտանելի մեծութենէն, եւ երբ Տէրը անոր հնարաւորութիւն կու տայ խաչերուն մէջէն ընտրելու իր ուզածը եւ մարդը ամենափոքր խաչը կ'ընտրէ իրեն համար, Աստուած կ'ըսէ, որ ճիշդ անիկա իր խաչն էր, որ այդքան ծանր կը թուէր իրեն: Այո՛, սա է մարդկային տկար բնութիւնը: Մենք սորված ենք մեզի տրուող բարիքները ընդունիլ այնպէս, կարծես ճիշդ այդպէս ալ պէտք է ըլլար, իսկ նուազագոյն փորձութեան դէպքին՝ տրտնջալ եւ դժգոհիլ մեզի բաժին հասածէն: Այսինքն, մենք կը շարունակենք Քրիստոսի հետեւորդները ըլլալ խօսքով միայն, իսկ գործերով կը մնանք աշխարհին կառչած: Իսկ ի՞նչ օգուտ անոնցմէ, որ շրթունքները «Քրիստոս» կը մրմնջեն, իսկ սիրտերը կը մնան համր ու կոյր...

Կը կարծեմ, որ մեր խնդիրը անհիմն վախի, Աստուծոյ հանդէպ ունեցած անվստահութեան, թերահաւատութեան եւ մեր եսասիրութեան մէջ է: Երբ կու գայ խաչը վերցնելու եւ Քրիստոսին հետեւելու վճռորոշ պահը, մենք այնքան կը դողանք մեր սեփական կաշիներուն վրայ, որ կը վախնանք մէկ փոքր նեղութենէն անգամ: Չենք հաւատար, որ մեր ուժերէն վեր

փորձութիւն մեզի չտրուիր, եւ որ Ամենասիրող Հայրը մշտապէս հոգ կը տանի մեզի եւ անպայման կ'օգնէ մեզ մեր դժուարին պահուն: Մենք մոռցած ենք, որ խաչի ճամբուն վրայ մինակ չենք, այլ Տէր Յիսուս Քրիստոս կ'անցնի մեզի հետ միասին, մեր կողքին՝ օգնելով ու քաջալերելով մեզի: Արդ, կը մաղթեմ, որ ճիշդ այս պահէն սկսեալ, իւրաքանչիւրիս վերաբերմունքը իր խաչին նկատմամբ արմատապէս փոխուի: Այդ խաչը ըլլայ թէ՛ մեր կամ մեր հարազատի հիւանդութեան տեսքով, թէ՛ մեր կիրքերու դէմ մղուող անձանձիր պայքարի տեսքով, թէ՛ վճռական պահուն Աստուծոյ կամքը նախընտրելու եւ արտաքնապէս մի գուցէ չշահելու տեսքով, ինչ որ ալ ըլլայ, աղաչենք Ամենակալին, որպէսզի ամրացնէ մեզ մեր հաւատքին մէջ, իրեն հանդէպ ունեցած մեր սերը աւելցնէ, օգնէ վճռական ու անվախ ըլլալ, որպէսզի սիրտի ուրախութեամբ եւ մեծ սիրով մեր խաչը վերցնենք ու քալենք Տիրոջ ետեւէն: Ուրախութեամբ համբերենք նեղութիւններուն, քանզի գիտենք, որ մեր Տէրը մեռած չմնաց խաչին վրայ, այլ փառապանծ յաղթանակ տանելով չարի ու մահուան հանդէպ՝ յարութիւն առաւ եւ յաւիտեանս Կենդանի Աստուած է: Ուրեմն ամէն ինչ ընենք, որպէսզի մենք ալ կենդանանանք Տիրոջմով, թոյլ տանք Ասոր մեզ յարութիւն տալու մեղքի մահէն եւ մէկընդմիջտ դրոշմենք մեր սիրտերուն մէջ, որ չկայ դէպի փրկութիւն տանող մէկ այլ ճանապարհ, քան խաչի ճանապարհը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ Քահանայ Մարգարեան

Հոգեւոր Հովիւ



Pour ce qui me concerne, loin de moi la pensée de me glorifier d'autre chose que de la croix de notre Seigneur Jésus Christ, par qui le monde est crucifié pour moi, comme je le suis pour le monde! (Galates 6:14)

Nos chers frères et sœurs pieux de Christ, avec une immense joie, je vous félicite tous à l'occasion de cette magnifique cinquième fête importante de notre église, à l'occasion de l'Exaltation de la Sainte Croix, qui est fêtée par toutes les Églises chrétiennes du monde.

Encore une fois, notre Père aimant a uni notre grande famille chrétienne sous les arcades sacrées de sa maison, pour commémorer et saluer une fois de plus la puissance toute-puissante de la Sainte Croix et pour rendre nos prières au Père, en s'appuyant en tout point sur le signe de la Croix invincible.

J'espère que vous connaissez tous l'histoire qui est à la base de la célébration d'aujourd'hui, lorsque, au septième siècle, la croix du Seigneur a été capturée par les Perses et emmenée en Perse et, malgré son état intact, est restée en captivité pendant quatorze ans. Et lorsque l'empereur Héraclius a finalement libéré en 628 la plus grande relique du christianisme et l'a retourné à Jérusalem, sur le chemin de transport de la croix, il s'est rendu également en Arménie, répandant à nouveau la bénédiction de Jésus-Christ sur notre terre et notre peuple.

Au moment quand je pensais aux origines de cette fête et j'imaginai la joie et le bonheur de nos ancêtres alors qu'ils adoraient le signe du Sauveur avec beaucoup de respect, je me suis rappelé d'une histoire que j'avais entendue récemment. Un de nos compatriotes revenant d'une visite de Beyrouth, me racontait que dans le centre ville, à côté de beaux bâtiments neufs, il y avait des bâtiments délabrés et incendiés qui ne cadraient pas avec l'image générale de la ville, ils la gênaient même. Lorsqu'il a demandé aux habitants pourquoi ils construisaient de nouveaux bâtiments au lieu de réparer les existants endommagés ils l'avaient répondu que ces bâtiments avaient été endommagés pendant la guerre et qu'il y a des gens qui y sont morts et que maintenant personne ne veut plus vivre dans une maison où quelqu'un est décédé.

En d'autres termes, l'idée de la mort est si étrangère à l'homme qu'elle le chasse même.

Mais je dirai qu'il y a un lieu de mort qui nous attire par une force invisible et emmène chaque année des millions de cœurs, et des millions de pèlerins Chrétiens s'y agenouillent chaque année et y apportent leur salut si touchant. Vous avez peut-être deviné que je parle de la colline du Golgotha, qui se trouve maintenant dans la zone du Temple de la Sainte Résurrection à Jérusalem.

Il se passe la même chose à la croix. Sur la croix est mort le Dieu humain, le Créateur de toutes choses, et cette même croix est devenue l'objet d'adoration des disciples du Christ, devant lesquels nous inclinons notre tête et nous l'embrassons, et c'est avec le plus grand amour que nous la portons autour du cou.

« Si quelqu'un veut venir à ma suite, qu'il se renie lui-même et prenne sa croix chaque jour, et qu'il me suive. » (Lc 9, 23)

Je ne parle pas du tout de porter notre croix en rognant et se plaignant, mes chers fidèles. Il s'agit de la porter avec la joie chrétienne, le courage, l'honneur et de la glorifier dans toute circonstance.

Je souhaite alors qu'à partir de ce moment même, l'attitude de chacun de nous envers la croix change radicalement. Que cette croix soit sous la forme de notre maladie ou de celle de notre être cher, sous la forme d'une lutte désintéressée contre nos passions, ou sous la forme de choisir la volonté de Dieu à un moment crucial et peut-être de ne pas la gagner extérieurement, quoi qu'il en soit, prions le Tout-Puissant de nous fortifier dans notre foi, d'augmenter notre amour pour lui, de nous aider à être déterminés et courageux à prendre notre croix avec joie et grand amour et à marcher après le Seigneur.

Supportons les épreuves avec joie, car nous savons que notre Seigneur n'est pas resté mort sur la croix, mais est ressuscité glorieux dans la victoire sur le mal et la mort, et est ressuscité pour toujours et à jamais. Faisons donc tout ce que nous pouvons pour vivre dans le Seigneur, pour lui permettre de nous ressusciter de la mort du péché et de sceller une fois pour toutes dans nos cœurs qu'il n'y a pas d'autre moyen de salut que le chemin de croix, maintenant et pour toujours et à jamais.

Avec mes bénédictions
Père David Margaryan
Prêtre Paroissial



Խաչ մասունքով, 18-րդ դար:



ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե.-


Ի՞նչ է Ս. Մկրտութիւնը:

Ս. Մկրտութիւնը Ընդհանրական Եկեղեցւոյ սրբազան խորհուրդներէն է, որուն միջոցով մարդ կը մաքրուի աղանական կամ սկզբնական մեղքէն եւ մինչ այդ գործած բոլոր մեղքերէն, կը դառնայ քրիստոնէայ, մարմին եւ անդամ Քրիստոսի Եկեղեցւոյ, երկնաւոր Հօր որդեգիր, Քրիստոսին ժառանգակից եւ Ս. Հոգիի տաճար: Այդ յաճախ կ'անուանեն նաեւ «մուտքի» խորհորդ, քանզի առանց մկրտուելու, ոեւէ մէկը չկրնար մասնակցիլ Եկեղեցւոյ միւս խորհուրդներուն: Ս. Մկրտութիւնը անկրկնելի խորհուրդ է եւ նուիրական պահ մը ամեն մարդու կեանքին մէջ, որ կ'ըլլայ միայն մէկ անգամ: Աստուածահաստատ այս խորհուրդը Եկեղեցի մտնելու դուռն է, առաջին քայլը, որմէ կը սկսի մարդուն հոգեւոր կեանքը: Ս. Մկրտութիւնը այն սահմանագիծն է, որ կը բաժնէ Եկեղեցւոյ մէջ գտնուողները միւսներէն: Ան մարդոց կամ հոգեւորականներուն կողմէ հնարուած ծիսակատարութիւն կամ երկրորդական բան չէ, այլ Քրիստոսի Եկեղեցւոյ անդամակցելու եւ քրիստոնէայ դառնալու գլխաւոր նախապայմանը: Ուստի, ինչ որ Աստուած անհրաժեշտ համարած եւ պատուիրած է այդ կատարել մեզի համար, աւելորդ չհամարենք՝ միշտ յիշելով, որ առանց Ս. Մկրտութեան չկայ նաեւ փրկութիւն: Եթէ մկրտեալը կը պահէ Ս. Մկրտութեամբ ստացած շնորհները, առօրեային մէջ կը ձգտի դէպի առ Աստուած, կը փորձէ կեանքին մէջ կիրառել Տիրոջ պատուիրաններն ու աստուածահաճոյ կեանքով ապրիլ, ապա այդ շնորհները կը բազմապատկուին եւ կու տայ իրենց քաղցր եւ բարի պտուղները: Բայց եթէ մարդ Ս. Մկրտութեան կու գայ անգիտակցաբար, առանց ներքին համոզումի եւ պարզապէս աւանդոյթի ուժով եւ անկէ յետոյ ալ անհաւատի նման կը շարունակէ ապրիլ իր նախկին կեանքով, ապա կը զրկուի աստուածային շնորհներէն: Ընդհանրական Եկեղեցւոյ 12 վարդապետներէն Ս. Կիւրեղ Երուսաղէմացի (313-386) կ'ըսէ. «Մեծ բան է վերահաս Մկրտութիւնը: Այդ գերիներու փրկագինն է, մեղքերու թողութիւնը, մեղքի մահը, հոգիի վերածնունդը, լուսաւոր զգեստը, սուրբ, անխախտ կնիքը, դէպի երկինք տանող կառքը, արբայութեան գրաւականը, որդեգրութեան շնորհքը»:

Շաբաթ, 12 Սեպտեմբեր 2020

Նաևակատիք Սուրբ Խաչի

Խաչվերացի տոսին նախորդող Շաբաթ օրը նաևակատիք է: Այդ օրը, ինչպես նաև Խաչվերացին յաջորդող Երեքշաբթի, Չորեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը Սուրբ եկեղեցւոյ տոսն է:



Holidays

Saturday, September 12, 2020

Eve of the Feast of Exaltation of the Holy Cross

The Saturday preceding the Feast of the Exaltation of the Holy Cross is the eve of the feast. That day, as well as the Tuesday, Wednesday and Thursday following the Feast of the Exaltation of the Holy Cross are the feasts of the Holy Church.

Sunday, September 13, 2020

Feast of Exaltation of the Holy Cross

Feast of the Exaltation of the Holy Cross is the last one of the five major feasts of the Armenian Apostolic Church. It is the most important feast among the feasts dedicated to the Holy Cross, as it is dedicated to the history of the return of the Holy Cross from imprisonment, its elevation and glorification. In the Armenian Apostolic Church, the Feast of the Exaltation of the Holy Cross is celebrated on Sunday during the period between September 11-17. This year that date is September 17, and the Monday following the Feast is a Memorial Day.

In 610 A. D, the Persian King Khosrov with a large army attacks the Byzantine Empire. Enthusiastic about the initial

victory, in 614 A. D. the Persian army enters Jerusalem. Many people are killed, and many are imprisoned. Pontiff Zakaria, the Patriarch of Jerusalem is imprisoned, too. However, the Persians are not satisfied and enter the Church of Holy Sepulcher and take the Holy Cross kept in the Church. The Holy Cross had been found and installed in the Church for the Christians to worship by Heghineh, the mother of the King Costandianos, in the beginning of the 4th century.

In 628 A. D., the Byzantine army led by the King Herakles fight against the Persians to return the Holy Cross. The Armenian army regiment, led by Mzhezh Gnounie, supported the Persian army. With the Lord's help the Byzantine army wins the battle. The Holy Cross is solemnly brought to the Armenian town Karin, from where it is carried to Constantinople, and then - to Jerusalem. On the way the Holy Cross was raised for the people to see and worship.

For Christians the Cross is God's power and strength and pride of all prides, on which Christ's innocent blood was shed. By means of the Cross Jesus proved His love towards mankind, and the Cross became for us the symbol of hope, love and saving.



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

Հոգեհանգիստ վասն համօրէն

ննջեցելոցն առաւօտեան ժամը 11:00

LUNDI, 14 SEPTEMBRE 2020

Jour commémoratif des défunts

Office de requiem pour tous les défunts à 11:00



ՇԱԲԹՈՒՎՆ ԱՂՈԹԲԸ

ԱՐՁԱԿՈՒՄ (ՄԵՂԵՐՈՒ ԹՈՂՈՒԹԻՒՆ, ՈՐ Կ'ԸՍԵ ԲԱՅԱԿԱՆ)

Թող ամենագոր Տերը ողորմի քեզի
եւ թողութիւն շնորհէ քու բոլոր
յանցանքներուդ եւ թէ՛ մոռցածներուդ:
Իսկ ես՝ քահանայական կարգիս իշխանութեամբ եւ
աստուածային հրամանին համաձայն՝ թէ
«իկնչ որ երկրի վրայ արձակէք՝ երկինքի մէջ
ալ արձակուած պիտի ըլլայ»,
Յօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով
կ'արձակեմ քեզ՝ մտածումով, խօսքով ու գործով
կատարած բոլոր մեղքերէդ,
եւ վերստին քեզ կը յանձնեմ
սուրբ Եկեղեցոյ խորհուրդներուն,
որպէսզի իկնչ բարիք որ գործես՝
Աստուծոյ քով բարեգործութիւն նկատուի
քեզի համար եւ հասնիս յաւիտենական կեանքի փառքին. Ամէն:

ABSOLUTION (DONNÉE PAR LE PRÊTRE)

Que Dieu ami des hommes, te fasse miséricorde
et t'accorde la rémission et te pardonne toutes tes transgressions,
celles que tu as confessées comme celles que tu as oubliées.
Et moi, en vertu de mon ordination au ministère sacerdotal,
conformément au commandement divin :
« ce que tu délieras sur terre sera délié dans les cieux »,
je te délie de toutes les péchés commis en pensée,
en paroles et en actes, au nom du Père, du Fils et du Saint-Esprit
et je te remets aux saints mystères de l'Eglise
afin que toutes les bonnes actions
que tu accompliras dorénavant contribuent
à ton salut et à ta gloire dans la vie éternelle. Amen.



ՅՈՐՂՈՐ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՅՆԱԼՆԵՐՈՒՆ

Սիրելի հաւատացեալներ,

Հակառակ թագաժահրի ստեղծած բոլոր դժուարութիւններուն եւ անկաստ պայմաններուն, Կիրակի, 13 Սեպտեմբեր 2020-ին, մեր Ս. Եկեղեցոյ մէջ պիտի նշենք Ս. Խաչի վերացման տօնը եւ պիտի կատարենք Ռեհանի օրհնութիւն, այնուհետեւ Գառնուկի-Մատաղօրնէքը Եկեղեցոյս բակին մէջ, ուր տեղի պիտի ունենայ նաեւ Խմորեղէնի, անուշեղէնի եւ յուշանուէրներու փոքր վաճառք մը: Հոս կ'ուզենք յիշեցնել թէ Հայց. Առաք. Ս. Եկեղեցին անխափան կը շարունակէ իր սրբազան առաքելութիւնը, շնորհիւ Եկեղեցոյս հոգեւոր հովիւին եւ ծխական խորհուրդին բռուն ջանքերուն եւ նուիրեալ ծառայութեան: Մեր Ս. Եկեղեցին առցանց ձեւով իր հաւատացեալ ժողովուրդին շարունակաբար կը մատուցէ հոգեպարար Ս. Պատարագներ, առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւններ, բժշկութեան եւ ապաքինման աղօթքներ, հոգեհանգստեան պաշտօններ, հոգեւոր խորհրդածութիւններ, առցանց տաղաւար տօներու նշումներ եւ այլ յիշատակութիւններ:

Այսուհանդերձ, Եկեղեցոյս յարակից մարմինները եւս՝ հոգեւոր հովիւն հետ միատեղ առցանց կերպով կը շարունակեն իրենց հերթական ժողովները, հեռակայ դրութեամբ ի գործ դնելով կազմակերպչական, ուսուցողական ամբողջական աշխատանքներն ու գործունէութիւնները:

Առ այդ, մեր մարմինները ըլլան անոնք՝ ծխական խորհուրդ, տիկնանց յանձնախումբ եւ օժանդակներ, Կիրակնօրեայ վարժարանի պատասխանատուներ եւ ուսուցիչներ, ACYOC «Կամար» երիտասարդաց միութիւն, թէեւ հեռակայ, սակայն միասնական աշխատանքով կը մատակարարեն բարեսիրական աջակցութիւն մեր համայնքի հայ երեցներուն, մանուկներուն եւ կարիքաւոր անհատներուն եւ ընտանիքներուն:

Թեպետեւ կը գտնուինք անորոշ իրավիճակի մը առջեւ, սակայն պէտք է հենուինք նաեւ՝ մեր Եկեղեցոյ ապագայի հեռանկարներուն: Մեր հոգեմտաւոր, ազգային, մշակութային այժմեական եւ կարեւորագոյն կառոյցին հիմը կը հանդիսանայ քրիստոնէական հաւատքին սնունդ ջամբող Հայց. Առաք. մեր Ս. Եկեղեցին, որուն աւանդութիւններուն ժառանգորդը ըլլալու արժանացած ենք շնորհիւ՝ մեր Ս. հայրապետներու անհատում եւ ծաւալուն հաւատքին, կամքին եւ նուիրագործումին:

Սիրելիներ, Խաչվերացի տօնին առիթով այսու Ձեզի կը դիմենք յորդորով՝ եւս մէկ անգամ զօրավիճ կանգնիլ Աստուծոյ տան այս սրբավայրին, որուն թանկագին առաքելութեան ժառանգորդներդ անպայմանօրէն բաժին պիտի ունենաք երկինքի արքայութեան մէջ:

Կո՛չ կ'ուղղենք Ձեզի հաւատացեալ հայորդիներ, որ Ձեր սրտաբուխ նուիրատուութիւններով աջակից դառնաք եկեղեցւոյ դիմագրաւած ներկայ դժուարութիւններուն, յատկապէս շարք մը ծեսերու եւ ձեռնարկներու իսպառ բացակայութիւնը մեզ կը դնէ նիւթական լուրջ եւ մտահոգիչ կացութեան մը առջեւ, որուն համար կարիքն ունինք Ձեր անմիջական եւ նուիրական ներդրումին:

Արդ, Դո՛ւք սիրելիներ, Աստուծոյ նուիրեալ զաւակներն էք, որ հարուստ էք առաւելաբար Ձեր հոգիներով եւ լիառատ հաւատքով, որ Ամենակալ Աստուած պիտի առաջնորդէ Ձեզ իւրաքանչիւրդ յաւիտենական կեանքին:

«Չեսեւաբար, անոնք որ կը չարչարուին Աստուծոյ կամքին համաձայն, բարիք գործելով թող աւանդեն իրենց անձերը անոր՝ իբր հաւատարիմ Արարիչին:» (1Պետ. 4:19):

Ձեր նուիրատուութիւնները կարելի է կատարել առցանց այցելելով եկեղեցւոյ կայքէջը –

saintgregory.ca



Լրացուցիչ տեղեկութիւններու կամ այլ հարցերու համար հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066:

Սպասումով եւ յարգանք՝
Ծխական հորհուրդ.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Շաբթուայ խորհրդածութիւններ

Սիրեցէ՛ք գեղեցկութիւնը. այն Աստուծոյ ստուերն
է ողջ աշխարհի (տիեզերքի) վրայ:

Շէյքսպիր

Մեր ամենալաւ հարստութիւնը մեր
գոհունակութիւնն է:

Շէյքսպիր

Ազգ մը լաւ կը կառավարուի, եթէ ժողովուրդը
հնազանդի առաջնորդներուն, եւ
առաջնորդներ հնազանդին օրէնքին:
Միայն ան կրնայ առաջնորդ ըլլալ, ով երբեք չի
կորսնցներ յոյսը:

Արդարութիւնը անմահ, յաւիտենական եւ
անփոփոխելի է Աստուծոյ նման:

Արդարութիւնը աշխարհի ներդաշնակութեան
բանալին է. առանց անոր ամէն ինչ կ'ընթանայ
խառնաշփոթ եւ ձախող:

Բարի խօսք մը կրնայ ջերմացուցել ձմրան երեք
ամիսները:

Ճաբոնական ասացուածք երբ որ բարկանաս,
խօսելէ առաջ տասը համրէ, եթէ բարկութիւնը
չի մեղմանար, հարիւր եւս համրէ:

Ճեֆըրսըն

Ոչ թէ մեծ հաւատքի կարիքը ունիս, այլ՝ հաւատք մեծ
Աստուծոյ հանդէպ: Թէկուզ եւ հաւատքդ մանանեիս
հատիկի չափ ըլլայ, բաւարար է լեռներ
տեղափոխելու համար:

Հադսըն Թէյլոր



**ՄՐՏԱԲՈՒԽ ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆՆԵՐ
Ի ՆՊԱՍ**

ՄԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՅՏԱՌՈՒԹԵԱՆ

*Գիտակցելով այս օրերու դժուարությունները, համեստորեն կը
խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իրենց
սրտաբուխ նուիրատուութիւնները
ի նպաստ Ս. Եկեղեցւոյ առաքելութեան նաեւ՝ հետեւեալ
միջոցներով՝*



այցելելով Եկեղեցւոյ կայքէջը

Website - Saintgregory.ca

Շնորհակալութիւն

**YOUR HEARTFELT DONATIONS
FOR THE SUPPORT OF OUR CHURCH:**

Concerning the difficulties that we are facing to those days;
we humbly ask our parishioners to remember St. Gregory the
Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.

Your donations can also be made through the

Church website – saintgregory.ca by:



Thank You!

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC
Donations of September have been received with great appreciation 2020**

SUNDAY SCHOOL:

Mrs. Chake Gunjian \$1000

GRAPE BLESSING:

Mr. & Mrs. Minas & Verjin Asaduryan \$40

BASIL BLESSING:

Miss Shoushan Aroyan \$20

RENOVATION FUND:

Mr. & Mrs. Aret Tasciyan \$100

ALTAR FLOWERS:

Mrs. Anoush Keopruilian \$25

Maral Boghossian \$25

FEAST OF THE EXALTATION OF THE HOLY CROSS:

Mrs. Houry Manougian \$150

Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$100

Mr. Vahe Keresteciyan \$100

Mrs. Anahid Kharmandarian \$25

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE VERGINE TOROSIAN:

Mr. & Mrs. Krikor & Rose Dikranian \$100

Mr. & Mrs. Mike Torosian \$100

Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$100

Mr. & Mrs. Roupen & Meline Arsever \$30

Miss Eva Matian \$25

Mr. Kevork Ohanian \$20

Mrs. Pekruhi Merhemetci \$20


HOKEHANKISD

(REQUIEM SERVICES)

N MEMORY OF:

THE LATE APRAHAM ZOURIKIAN:

Mrs. Silva Karaoghlanian \$30



S O L Ա Յ Ո Յ Ց

**Յ Ա Ռ Ա Ջ Ի Կ Ա Յ Շ Ա Բ Թ Ո Ւ Ա Ն
Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր – S E P T E M B R E**

**14, Երկուշաբթի – Տօն Է Խաչի – Յիշատակ Մեռելոց:
Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց
Lundi 14 – Fête de la Croix.
*Office de Requiem pour tous les défunts.***

**15, Երեքշաբթի – Տօն Է Եկեղեցւոյ:
Mardi 15 – Fête de l'Église.**

**16, Չորեքշաբթի – Պահք: Տօն Է Եկեղեցւոյ:
Mercredi 16 – Jeûne. Fête de l'Église.**

**17, Հինգշաբթի – Տօն Է Եկեղեցւոյ:
Jeudi 17 – Fête de l'Église.**

**18, Ուրբաթ – Պահք: Տօն Է Խաչի:
Vendredi 18 – Jeûne. Fête de la Croix.**

**19, Շաբաթ – Տօն Է Խաչի:
Մաղթանք Հանրապետական` Հայաստանի
Անկախութեան հռչակման տարեդարձ:
Samedi 19 – Fête de la Croix.
Anniversaire de la proclamation
de l'indépendance de la République d'Arménie**



Faire un don



LE FONDS D'AIDE AUX SINISTRES DE L'EXPLOSION DE BEYROUTH

Frères et sœurs Bien-aimés en Christ,

C'est avec une profonde douleur et une immense tristesse que nous avons appris hier, le mardi 4 août 2020, l'explosion massive qui a secoué la Capitale libanaise, Beyrouth, emportant la vie de plus d'une centaine de personnes, et causant des pertes considérables et dévastatrices.

En cette période difficile, le peuple libanais, ainsi que la communauté arménienne ont besoin de nos prières et de notre soutien.

Pour répondre à la crise humanitaire en cours, causée par l'explosion, Sa Grâce l'Évêque Abgar Hovakimyan, le Primat, invite nos frères et sœurs bien-aimés en Christ à prier pour le repos des âmes des victimes innocentes et pour le prompt rétablissement des blessés.

Veuillez envisager de participer au service spécial de prière et de requiem qui aura lieu ce dimanche le 9 août 2020 dans toutes les Églises apostoliques arméniennes du Canada.

A cette occasion, le Diocèse a créé le fonds d'aide aux sinistrés de l'explosion de Beyrouth. Vous êtes tous invités à faire des dons au Diocèse ou à la Paroisse locale. Ces dons seront versés aux familles des innocentes victimes par le biais du Saint-Siège d'Étchmiadzine.

Que Notre Seigneur garde le Liban sous sa protection divine aujourd'hui et pour toujours. Amen!

Faire un don



Հոգևոր Հովիվի Այցելութիւններ Վերապահումով

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք թէ նկատի ունենալով համաճարակի այս արտասովոր պայմանները, սակայն անոնք որոնք կը փափաքին Տէր Հօր այցելութիւնը հիւանդանոցի, տնօրհնէքի կամ այլ ընտանեկան հիւանդ պարագայի մը համար, կրնան դիմել եկեղեցւոյ գրասենեակ հեռաձայնելով (514) 279-3066 :

Հոգևոր հովիւը իր այցելութիւնը պիտի կատարէ ձեռք առնելով համաճարակին պատճառով ծրագրուած ապահովական եւ առողջապահական բոլոր միջոցները, հետեւելով քեպէք նահանգի Covid-19 **համաճարակի** ուղեցոյցի ցուցմունքներուն:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Visites du curé de la paroisse avec précaution

Compte tenu des circonstances inhabituelles de la pandémie, nous avons le plaisir de vous informer que des visites avec notre curé sont toujours disponibles. Ceux qui souhaitent la bénédiction à la maison, l'hôpital ou une visite avec le curé de la paroisse pour la prière pour un membre de la famille malade peuvent contacter le bureau de l'église au (514) 279-3066.

Le curé de la paroisse effectuera ses visites en prenant toutes les mesures de santé et de sécurité nécessaires selon les directives de la province de Québec pendant la pandémie COVID-19.

BUREAU DE L'ÉGLISE

Parish Priest's Visits with Precaution

Given the pandemic's unusual circumstances, we are pleased to inform you that visits with our parish priest are still available. Those who wish the visit of our parish priest at a hospital, for home blessing or prayer for an ailing family member may contact the church office at (514) 279-3066.

The Parish Priest will make his visits by taking all necessary health and safety measures following the province of Quebec's guidelines during the COVID-19 pandemic.

CHURCH OFFICE



SOL

ԽԱԶԿԵՐԱՏ

FÊTE MAJEURE DE L'EXALTATION
DE LA SAINTE CROIX



ՏԱՐԱԻՐ ՏՈՒՆ Ա. ՊԱՏԱՐԱԳ
LA SAINTE MESSE DE LA FÊTE MAJEURE

Կիրակի, 13 Սեպտեմբեր 2020
Dimanche, 13 Septembre 2020

Ուղիղ հեռարձակում – Facebook Live
Saint Gregory Armenian Apostolic Church
of Montreal

Առաւօտեան Ժամերգութիւն /
Matines à 09:30

Ա. Պատարագ / Sainte Messe 10:30
Ռեհանի օրհնութիւն / Bénédiction de
basilic
12 -12 :30

ՊԱՏԱՐԱԳԻԶ ԵՒ ԶԱՐՈՉԻԶ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԾ ԶԳՆՅ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՀՈԳԵԽՈՐ ՀՈՎԻԻ

CÉLÉBRATION ET L'HOMÉLIE

RÈV. PÈRE DAVID MARGARYAN
PRÊTRE PAROISSIAL

Յաւարտ Ա. Պատարագի
ԱՏԱՐՈՐՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԵՆԵՈՒՐ
Եկեղեցւոյ բակին մէջ:
BÉNÉDICTION MADAGH ET DISTRIBUTION
Dans la cour de l'Église
ԽՆՈՒԵՐԵՆԻ, ԱՆՈՒԵՐԵՆԻ ԵՒ
ՅՈՒՏԱՆՈՒԴՆԵՐՈՒ Վաճառք

Այնպէս – աղի խմորեղէններու տեսակներ,
Կարկանդակներ - Պանիրով Պեթելներ,
Զեթելներ եւ Անուշեր:

Կազմակերպութեամբ՝ Ծիական
խորհուրդի անդամներուն եւ Տիկնանց
Յանձնախումբին:

VENTES DE PÂTISSERIE ET SOUVENIRS

Organisé par des membres Conseil Paroissial
et des dames auxiliaires de l'église.
Atchma, gateaux, pâtes avec fromage,
cheoregs et confitures.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 /
Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008
stgregorychurch@gmail.com

 Saint Gregory Armenian Apostolic Church
Of Montreal

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
SAINT GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

Ուղիղ հեռարձակում /Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Կիրակի, 13 Սեպտեմբեր 2020 Խաչվերացի
տաղաւար տօնն է, Եւ այս առիթով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի տօնին յաջորդող օրը
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Երկուշաբթի, 14 Սեպտեմբեր 2020
առաւօտեան ժամը 11:00-ին:

Հաւատացեալներ, որոնք կը փափաքին հոգեհանգստեան պաշտօն խնդրել
Եւ մասնակցիլ Երկուշաբթի ննջեցելոց յիշատակութեան օրուան առիթով
կրնան դիմել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066:

On Sunday, September 13, 2020, is a major feast of the
Exaltation of the Holy Cross, and on this occasion the requiem services
will be held on the

REMEMBRANCE DAY OF THE DEAD
MERELOTZ - REQUIEM SERVICES


Monday, September 14, 2020, at 11:00 AM

Our parishioners who wish to schedule a requiem service for
Monday Remembrance Day of the Dead (Merelotz) can contact
the Church office at (514)279-3066.



ՄՈՆՔՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF
MONTREAL

**ՎԵՐԱՄՈՒՏ
ԵՒ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ**



Սուրբ ԵՆ Անմահ
Պատարագ
Կիրակի, 20 Սեպտեմբեր 2020

Յաւարտ Ս. Պատարագի
Օրհնութեան Կարգ
**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ
Ժամը 12:30-ին**

Սիրով կը հրաւիրենք բոլոր աշակերտները,
ուսանողներն ու կրթական մշակները
օրհնութիւն ստանալու,
խաղաղութեամբ եւ յաջողութեամբ վերսկսելու
ուսումնական տարեշրջանը:

**Բարի եւ հեգասահ տարեշրջան կը մաղթենք
մեր բոլոր աշակերտ-ուսանողներուն
եւ ուսուցիչներուն:**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com



ԱՄԵՆԱՄԵԼՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 26 Սեպտեմբեր 2020

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Ի՛նչ որ կը խնդրէք աղօթքով,
հաւատացե՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի”
(Ղուկ. 11:24):**

Samedi, le 26 Septembre 2020

Office du soir à 17h00.

**“C'est pourquoi je vous dis : tout ce que vous demanderez en priant,
croyez que vous le recevrez, et il vous sera fait”
(Marc 11 :24).**



ՄԱՂԹԱՆՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 29-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Ուղիղ հեռարձակում – En direct

 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԻ՝
ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
Առաջնորդ Գանատահայոց Թեմին



Յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի

ՄԱՂԹԱՆՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ Կիրակի, 27 Սեպտեմբեր 2020

| | |
|------------------------|-------|
| Առաւօտեան Ժամերգութիւն | 09:30 |
| Սուրբ Պատարագ | 10:30 |
| Հոգեհանգստեան Պաշտօն | 12:15 |
| Հանրապետական Մաղթանք | 12:30 |

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՅԻՇԵՑՈՒՄ - ԿԱՅԱԼԱՏԵՐԻ

Մեր սիրելի հաւատացեալներու ուշադրութեան՝

Outremont-ի քաղաքապետարանի
կանոններուն համաձայն

1 Օգոստոս 2020-էն՝ սկսեալ պիտի վերսկսի
կիրարկուիլ կայանատեղիի համար նշանակուած
երկու ժամ տեւողութեամբ դրութիւնը:

Ուստի, կը խնդրենք մեր հաւատացեալներէն շաբթուայ
ընթացքին նկատի ունենալ երկու ժամ տեւողութեամբ
կայանատեղիի արտօսութեան ժամկետը, իսկ Կիրակի
օրերուն կրնան օգտագործել դպրոցի կայանատեղին:

Դպրոցին մանրամասնութիւնները կը գտնուի կից
յայտարարութեան մէջ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

NOTE - PARKING

Attention to our beloved faithful:
According to Outremont City Rules

Starting from **August 1, 2020**, a two-hour permitted time
for the parking lot will resume.

However, we ask our faithful to consider appointed two-hour
duration time permitted for the parking during weekdays, and
on Sundays, the mentioned school parking is usable.

Details for the school can be found in the attached
announcement below.

CHURCH OFFICE



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2